

ՍԱՂՄՈՍ 106

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Իսրայելի ըմբոստությունը և ՏԻՐՈՋ ազատագրումը <u>MT ներածություն</u> <u>չկա</u>	Ուրախություն Իսրայելի մեղքերի ներման մեջ	Աստծո մեծամեծ գործերի պատմությունը, մեղքի խոստովանություն և օգնության աղոթք	ՏԻՐՈՋ բարու- թյունը Իր ժողովրդի հանդեպ	Ազգովի մեղքի խոստովանություն
106:1-3	106:1ա 106:1բ-3	106:1-3	106:1-3	106:1-2 106:3-4բ
106:4-5	106:4-5	106:4-5	106:4-5	106:4գ-5
106:6-12	106:6-7 106:8-12	106:6-12	106:6-12	106:6-7բ 106:7գ-8 106:9-10 106:11-12
106:13-15	106:13-15	106:13-15	106:13-15	106:13-14 106:15-16
106:16-18	106:16-18	106:16-18	106:16-18	106:17-18
106:19-27	106:19-23 106:24-27	106:19-27	106:19-23 106:24-27	106:19-20 106:21-22 106:23 106:24-25 106:26-27
106:28-31	106:28-31	106:28-31	106:28-31	106:28-29 106:30-31
106:32-33	106:32-33	106:32-33	106:32-33	106:32-33
106:34-39	106:34-39	106:34-39	106:34-39	106:34-35 106:36-37 106:38

				106:39-40
106:40-43	106:40-43	106:40-43	106:40-46	
				106:41-42
				106:43-44
106:44-46	106:44-46	106:44-46		
				106:45-46
106:47-48	106:47	106:47	106:47	106:47
	106:48ա-գ	106:48	106:48ա-գ	106:48
	106:48դ		106:48դ	

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
 ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Եթե Սաղմոս 105 ՅԱՀՎԵԻ կողմից Աբրահամի և նրա սերունդների փրկության՝ ազատագրման մասին պատմությունն է, ապա Սաղմոս 106-ը նրանց շարունակական ապստամբության մասին պատմությունն է: ՅԱՀՎԵՆ հավատարիմ է, Նրա ժողովուրդը՝ անհավատ (տես՝ Նեեմիա 9):

Բ. Պատմական դեպքերից ակնարկները հիմնականում վերցված են Ելից, Ղևտացիների, Թվոց, 2 Օրինաց և Դատավորաց գրքերից: Ահա դրանց ցանկը՝

1. Սաղմ. 106:7 – Ելից 14:11-12
2. Սաղմ. 106:9- Ելից 14:21
3. Սաղմ. 106:10 – Ելից 14:30
4. Սաղմ. 106:11 – Ելից 14:28, 15:5
5. Սաղմ. 106:12 – Ելից 14:31
6. Սաղմ. 106:13 – Սաղմ. 15:24, 16:2, 17:2
7. Սաղմ. 106:14 – Ելից 17:2, Թվոց 11:4
8. Սաղմ. 106:15 – Թվոց 11:31
9. Սաղմ. 106:16 – Թվոց 16:3
10. Սաղմ. 106:17 – Թվոց 16:32
11. Սաղմ. 106:18 – Թվոց 16:35

12. Սաղմ. 106:19 – Ելից 32:4, 2 Օրինաց 9:8
13. Սաղմ. 106:23 – Ելից 32:10, 11-14, 2 Օրինաց 9:14, 25-29
14. Սաղմ. 106:24 – Թվոց 14:31, 2 Օրինաց 1:32, 9:23
15. Սաղմ. 106:25 – Թվոց 14:2, 2 Օրինաց 1:27
16. Սաղմ. 106:26 – Թվոց 14:28-35
17. Սաղմ. 106:27 – 2 Օրինաց 4:27
18. Սաղմ. 106:28 – Թվոց 25:2,3, 2 Օրինաց 4:3
19. Սաղմ. 106:29 – Թվոց 25:4
20. Սաղմ. 106:30 – Թվոց 25:7,8
21. Սաղմ. 106:31 – Թվոց 25:11-13
22. Սաղմ. 106:32 – Թվոց 20:2-13
23. Սաղմ. 106:33 – Թվոց 20:3,10
24. Սաղմ. 106:34 – Դատ. 1:21,27-36, Deut. 7:2,16
25. Սաղմ. 106:35 – Դատ. 3:5,6
26. Սաղմ. 106:36 – Դատ. 2:12
27. Սաղմ. 106:37 – 2 Օր. 12:31, 32:17
28. Սաղմ. 106:38 – Թվոց 35:33, 2 Օր. 18:10
29. Սաղմ. 106:39 – Ղևտ. 17:7, 18:24, Թվոց 15:39, Դատ. 2:17
30. Սաղմ. 106:40 – Ղևտ. 26:30, 2 Օր. 32:19, Դատ. 2:14
31. Սաղմ. 106:41 – Դատ. 2:14
32. Սաղմ. 106:42 – Դատ. 4:3, 10:12
33. Սաղմ. 106:43 – Դատ. 2:16-18, 6:6
34. Սաղմ. 106:44 – Դատ. 3:9, 6:7, 10:10
35. Սաղմ. 106:45 – Ղևտ. 26:42, Դատ. 2:18
36. Սաղմ. 106:46 – 2 Մնաց. 30:9, Եզրաս 9:9, Նեեմ. 1:11

Գ. Ինչպես հաճախ է պատահում Սաղմոսներում, ԵԶԱԿԻ և ՀՈԳՆԱԿԻ թվերի միջև տատանումը հնարավոր է կապված լինի խմբագրի կողմից անհատական սաղմոսը հավաքական, ծիսական սաղմոսի վերածելու հետ:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 106:1-3

¹Ալելուիա՛, գոհությո՛ւն մատուցեք ՏԻՐՈՉԸ,

Քանի որ բարի է, քանի որ

Նրա ողորմությունը հավիտյան է:

²Ո՛վ կարող է պատմել ՏԻՐՈՉ հզոր գործերը,

Ո՛վ կարող է իմացնել Նրա ամբողջ փառաբանությունը:

³Օրհնյա՛լ են նրանք, որ արդարությունն են պահում,

Ու շարունակ անում են այն, ինչ ճիշտ է:

106:1-3 Այս առաջին պարբերությունն ունի երկու թեմա:

1. ՅԱՀՎԵԻ նկարագրությունը՝

ա. Նա բարի է (BDB 373 II, տես՝ 2 Մնաց. 5:13, 7:3, Սաղմ. 25:8, 86:5, 100:5, 107:1, 118:1,29, 145:9):

բ. Նրա բարեգությունը հավիտենական է (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (*hesed*) և ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ (*o'lam*)):

2. Նրա իրական հետևորդների նկարագրությունը

ա. նրանք խոսում են Նրա զորավոր գործերի մասին

բ. նրանք փառաբանում են Նրան

գ. նրանք պահում են արդարությունը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԱՏԱՎՈՐ, ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ և ԴԱՏԱՍՏԱՆ)

դ. նրանք (տես՝ LXX, Փեշիտտա, Վուլգատա, MT, «նա») արդարություն են գործում (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ):

Այս նկարագրությունը կարևոր է, քանի որ դրան հետևում է Իսրայելի անհավատարմության կրկնվող պատմական ակնարկ:

106:1 Այս Սաղմոսը սկսում և ավարտվում է փառաբանելու հրամաններով:

1. փառաբանեցե՛ք – BDB 237, KB 248, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, Սաղմ. 106:1, տես՝ 107:1, 118:1,29, 136:1

2. գոհություն մատուցե՛ք (բառացի՝ փառաբանեք) – BDB 392, KB 389, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, Սաղմ. 106:1, տես՝ 1 Մնաց. 16:41

3. փառք տվե՛ք – նույնը ինչ կետ 1, Սաղմ. 106:48

Հավատարիմ հետևորդները Նրան փառաբանում են Նրա մասին իրենց խոսելաձևով և Նրա նման ապրելակերպով: Երանելի է այն անձը, որ հնազանդվում է ՏԻՐՈՉԸ (տես՝ Սաղմոս 1):

106:2 «հզոր գործերը» Սա վերաբերում է ՅԱՀՎԵԻ փրկագործություններին և հոգատարությանը: Այս թեման շարունակվում է Սաղմոս 105-ից (տես ամբողջական գրառումը Սաղմոս 105-ի 105:1-7-ում յոթ դեպքերի մասին):

1. հզոր գործերը, Սաղմ. 106:2 – BDB 150, տես՝ 2 Օր. 3:24, Սաղմ. 20:6, 71:16, 145:4,12, 150:2, Եսայի 63:15

2. հրաշքներ, Սաղմ. 106:7 – BDB 810 (տես՝ գրառում Սաղմ. 105:1-7-ում)

3. գործեր, Սաղմ. 106:13 – BDB 795, տես՝ Հեու. 24:31, Սաղմ. 33:4, 93:5

4. մեծամեծ գործեր, Սաղմ. 106:21 – BDB 152, այսինքն՝ հատկապես Եգիպտոսում, տես՝ 2 Օր. 10:21, այստեղ, բայց նաև ՅԱՀՎԵԻ մյուս գործերի մասին Հոր 5:9, 9:10, 37:5, Սաղմ. 71:19, 126:2

5. հրաշքներ, Սաղմ. 106:22 – նույնը ինչ #2

6. հրաշքներ (բառացի՝ «ահավոր բաներ»), Սաղմ. 106:22 – BDB 431, KB 432, *Niphal* ԴԵՐԲԱՅ, տես՝ 2 Օր. 10:21, 2 Թագ. 7:23, 1 Մնաց. 17:21, Սաղմ. 66:3, 145:6, Եսայի 64:3:

106:3 «շարունակ / ամեն ժամանակ» Սա աշակերտության մեջ կարևորագույն հարց է: Աստվածահաճո կյանքը ամբողջ դրույթով առաջադրանք է: Հիշե՛ք, որ աս ՀԿ-յան միջավայր է: Այն արտացոլում է 2 Օրինաց 30:15,19-ի «երկու ճանապարհը», Սաղմոս 1-ը: Գաղ. 3:10-12-ի մեջբերումը լուսաբանում է ՀԿ-յան գործերի վրա հիմնված ուխտը: Չնայած ՆԿ-ի հավատացյալները ՀԿ-ի ներքո չեն (տես՝ Գործք 15), հենց սկսում ենք ճանաչել Աստծուն Քրիստոսի մեջ, Նրա համար ենք ապրում «ամեն ժամանակ»: Մենք դա անում ենք ոչ թե ընդունված լինելու համար, այլ քանի որ մենք ընդունվել ենք Իր կողմից: Սուրբգրային հավատքի նպատակը մի օր երկինք գնալը չէ, այլ ամեն օր Քրիստոսանմանությունը (տես՝ Հռոմ. 8:28-29, 2 Կորնթ. 3:18, 7:1, Գաղ. 4:19, Եփես. 1:4, 2:10, 4:13, 1 Թեսաղ. 3:13, 4:3,7, 5:23, 1 Պետ. 1:15):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 106:4-5

⁴Հիշի՛ր ինձ, ո՛վ ՏԵՐ, Քո ժողովրդի նկատմամբ

Ունեցածդ բարեհաճությամբ,

Այցելի՛ր ինձ Քո փրկությամբ,

⁵Որպեսզի Քո ընտրյալների բարիքը տեսնեմ,

Ուրախանամ Քո ազգի ուրախությամբ,

Պարծենամ Քո ժառանգությամբ:

106:4-5 Այս պարբերությունը սկսում է երկու ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐՈՎ, որոնք կիրառվում են որպես աղոթք:

1. հիշի՛ր ինձ – BDB 269, KB 269, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. այցելի՛ր ինձ (բառացի՝ «օգնիր») – BDB 823, KB 955, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

LXX, Փեշիտտան և Վուլգատան «ինձ» դերանվան փոխարեն տալիս են «մեզ»:

Այս համարները կարծես թե արտացոլում են գերության գտնվող անձի (տես՝ Սաղմ. 106:47, այսինքն՝ Իր ուխտի ժողովրդի բոլոր մեղքերի պատճառով, 106:6), որն աղոթում է, որպեսզի այնքան երկար ապրի, որ կարողանա տեսնել ՅԱՀՎԵԻ Իր ժողովրդի վերականգնումը: Նա մի քանի արտահայտություն է նշում, որոնք մատնացույց են անում ՅԱՀՎԵԻ բարեգութ ուխտը (այսինքն՝ հիշելու):

1. Քո բարեհաճությունը – Սաղմ. 106:4
2. Քո ընտրյալներին – Սաղմ. 106:5
3. Քո ազգը – Սաղմ. 106:5
4. Քո ժառանգությունը – Սաղմ. 106:5

106:5 Ուշադրություն դարձրեք երեք ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ՝

1. որպեսզի տեսնեմ – BDB 906, KB 1157, *Qal*
2. որպեսզի ուրախանամ – BDB 970, KB 1333, *Qal*
3. որպեսզի պարծենամ – BDB 237, KB 248, *Hithpael*

Ուշադրություն դարձրե՛ք, որ բոլոր երեքն էլ հավաքական իմաստով են՝

1. Քո ընտրյալները
2. Քո ազգը
3. Քո ժառանգությունը

Զգույշ եղե՛ք արտակարգ, անհատականացված շեշտադրությունից, երբ հարցը վերաբերում է փրկությանը: Մենք փրկվում ենք ծառայելու Աստծո ընտանիքին՝ Զրիստոսի մարմնին: Անհատի վրա չափից ավել շեշտադրությունը հոգևոր դուռ է բացում Եղեմական մեղքերի համար (Ծննդոց 3):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՎԱՏՔԸ ՀԱՎԱՔԱԿԱՆ Է

❖ «**Քո ազգը**» «Ազգ» (BDB 156) թարգմանված երբայերեն բառը սովորաբար բացասական տերմին է՝ նկատի ունեցող հեթանոսներին (այսինքն՝ Սաղմ. 2:1,8, 9:5, 15, 1, 19, 20), սակայն կարող է նաև կիրառվել Իսրայելի համար, ինչպես որ այստեղ (տես՝ Ծննդ. 12:2, 2 Օրին. 4:6-8, Սաղմ. 33:12, Եսայի 26:2, Երեմ. 31:36):

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 106:6-12

- ⁶Մենք մեր հայրերի հետ մեղանչեցինք,
Անօրենություն կատարեցինք, հանցանք գործեցինք:**
- ⁷Մեր հայրերը Եգիպտոսում չհասկացան Քո հրաշքները,
Զհիշեցին Քո մեծ ողորմությունը,
Այլ գայրացրին Նրան ծովի մոտ՝ Կարմիր ծովի մոտ:**
- ⁸Բայց նրանց փրկեց Իր անվան համար,
Որպեսզի ճանաչեցնի Իր մեծ զորությունը:**
- ⁹Եվ Կարմիր ծովին սաստեց, ու այն ցամաքեց,
Խորունկ տեղերով առաջնորդեց նրանց՝
Ինչպես անապատի միջով:**
- ¹⁰Փրկեց նրանց ատողի ձեռքից
Ու ազատեց նրանց թշնամու ձեռքից:**
- ¹¹Ձրերը ծածկեցին նրանց թշնամիներին,
Նրանցից ոչ մեկը չմնաց:**
- ¹²Այն ժամանակ հավատացին Նրա խոսքերին
Եվ օրհնություն երգեցին Նրան:**

106:6-12 Այս պարբերությունը կենտրոնանում է Ելիցի վրա:

1. Տվյալ ժամանակաշրջանում Աստծո ժողովուրդը (Սաղմ. 106:6)
 - ա. իրենց հայրերի պես մեղանչեցին (ՎԱՂԱԿԱՏԱՐ)
 - բ. անօրենություն գործեցին (ՎԱՂԱԿԱՏԱՐ)
 - գ. հանցանք գործեցին (ՎԱՂԱԿԱՏԱՐ)
2. մեր հայրերը (Սաղմ. 106:7, տես՝ Դևտ. 26:40, Նեեմ. 9:32-34, Երեմ. 3:25, Դան. 9:8,16):
 - ա. չհասկացան Քո հրաշքները
 - բ. չհիշեցին Քո մեծ ողորմությունը (տես՝ Դատ. 8:34, Նեեմ. 9:17, Սաղմ. 78:42)
 - գ. ծովի մոտ ապստամբեցին/զայրացրեցին Նրան
3. այնուհանդերձ ՅԱՀՎԵՆ շարունակեց գործել (Սաղմ. 106:8-11) նրանց օգտին
 - ա. Նա փրկեց նրանց
 - բ. Նա Իր գործությունը հայտնեց նրանց (այսինքն՝ հայտնեց Իր բնավորությունը Իր գործերի մեջ, տես՝ Սաղմ. 98:2, 103:7)
 - գ. Նա հանդիմանեց Կարմիր Ծովը (այս անսովոր ԲԱՅԻ համար տես՝ Սաղմ. 104:7)
 - դ. Նա առաջնորդեց նրանց
 - ե. Նա փրկեց նրանց
 - զ. Նա ազատեց նրանց
4. ՅԱՀՎԵԻ բոլոր գործերից հետո նրանք սկսեցին հավատալ (տես՝ Ելից 14:31, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼԸ, ՎՍՏԱՀԵԼԸ, ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ՈՒՄ) և փառաբանեցին Նրան (Սաղմ. 106:12):

Որոշ գիտնականներ այս համարը դիտարկում են որպես մեղքի ազգային խոստովանություն տաճարում տոնական օրվա ընթացքում: Ներման աղերսը գտնվում է Սաղմ. 106:47-ում և ՅԱՀՎԵԻ շնորհքի վրա իրենց ունեցած վստահությունը՝ Սաղմ. 106:48-ում:

106:7 «**ծովի մոտ՝ Կարմիր ծովի մոտ**» Կարծես թե կրկնություն կա MT-ում: Արդի շատ թարգմանություններ (NRSV, NJB, NAB) վերցնում են «ծովի մոտ» խոսքի բաղաձայնները և դրանցից կազմում ՅԱՀՎԵԻ համար անուն (տես՝ Սաղմ. 78:17,56, Դան. 7:18,22,25)՝ Աստծո համար տիտղոս ստանալով:

1. Բարձրյալ – NRSV, NJB, NAB
2. Ամենակարող – TEV

❖ **«Կարմիր ծով»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿԱՐՄԻՐ ԾՈՎ

106:8 Այս համարը կենտրոնանում է ՅԱՀՎԵԻ փրկության համար կատարած ավելի մեծ գործի վրա: Նա ուզում է ազգերը՝

1. վախենան Իսրայելից
2. ճանաչեն Նրան

Խնդիրն այն է, որ Իսրայելը երբեք լիարժեք կերպով չչափեց ուխտը (տես՝ Սաղմ. 106:6-7): Ազգերը ընդունեցին աղավաղված հայտնություն (տես՝ Եզեկ. 36:22-23), ուստի ՅԱՀՎԵՆ ստիպված էր նոր կերպ զարգացնել (այսինքն՝ նոր ուխտ, տես՝ Երեմ. 31:32-34) նրանց փրկելու համար:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՃԱՆԱԶԵԼ

106:9 ՀԿ-ը պարբերաբար արձանագրում է ջրի վրա ՅԱՀՎԵԻ ունեցած վերահսկողության մասին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՋՐԵՐ

106:10 «փրկեց» Տես՝ Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿԱԳԻՆ, ՓՐԿԱԳՆԵԼ

❖ **«թշնամու ձեռքից»** Սա գուգահեռվում է «նրանց ատողի ձեռքից» խոսքին: Սա վերաբերում է Ելիցի Փարավոնին: Սուրբ Գրքի գիտնականները տարաձայնություններ ունեն, թե որ Փարավոնին էր սա վերաբերում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵԼԻՑԻ ՏԱՐԵԹԻՎԸ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 106:13-15

¹³Բայց շուտով մոռացան Նրա գործերը,
Նրա խորհուրդներին չապասեցին,
¹⁴Այլ մեծ ցանկությամբ ցանկացան անապատում
Ու Աստծուն փորձեցին անջրդի վայրում:
¹⁵Եվ նրանց տվեց իրենց խնդրածը,
Բայց վտիտություն ուղարկեց նրանց անձերի վրա:

106:13-15 Այս պարբերությունը աստվածաբանորեն կապված է նախորդ պարբերությանը (Սաղմ. 106:6-12): Իսրայելի ապաշխարությունը, խոստովանությունը և հավատքը մնայուն չէր:

Սաղմոս 106:6-12-ի կառուցվածքային առանձնահատկությունները կրկնվում են՝

1. նրանց գործերը, Սաղմ. 106:13-14
ա. նրանք շուտով մոռացան (հաճախ որպես զգուշացում, տես՝ 2 Օր. 4:9, 6:12, 8:14, Սաղմ. 103:2) Նրա խոսքը (տես՝ Սաղմ. 106:24)
բ. նրանք չապասեցին Նրա խորհրդին
գ. մեծ ցանկությամբ ցանկացան (Թվոց 11:4)
2. ՅԱՀՎԵԻ պատասխանը՝
ա. Նա տվեց նրանց իրենց չար ցանկությունները (այսինքն՝ կերակուր, տես՝ Թվոց 11:4-6, 31, Սաղմ. 78:29-31, նաև նկատեք՝ Հռոմ. 1:24, 26, 28)
բ. Նա վտիտություն ուղարկեց նրանց անձերի համար (տես՝ Թվոց 11:33, Գլխոն Արչերի *Աստվածաշնչի խոսքին խոսքերի հանրագիտարան* գրքում տես հետաքրքիր քննարկում այս թեմայի շուրջ, էջ՝ 136):

106:14 «Ու Աստծուն փորձեցին անջրդի վայրում/անապատում» Այս ԲԱՅԸ (BDB 650, KB 702, *Piel* ԱՆԿԱՏԱՐ *վալ*-ով) կիրառվում է նկարագրելու Իսրայելի անհավատությունը Ելիցի ընթացքում և անապատում դեգերելու շրջանում (այսինքն՝ անապատում): Այս անհավատությունը արտահայտվում է նրանք հարձակումներով ՅԱՀՎԵԻ առաջնորդական կազմի վրա (այսինքն՝ Մովսեսի և Ահարոնի, տես՝ Ելից 5:21, 14:11, 15:24, 16:2, 17:2, 3, 32:1, Թվոց 11:1, 4, 14:1, 2, 21:5, Սաղմ. 106:16): Հենց այս նույն ԲԱՅԸ կիրառվում է Ելից 17:2, 7, Թվոց 14:22, 2 Օր. 6:16, 33:8, Սաղմ. 78:18, 41, 56, 95:9-ում:

Հետաքրքիր է նշել, որ այս նույն ԲԱՅԸ մի քանի անգամ կիրառվում է Աստծո համար Իր ժողովրդին փորձելիս (տես՝ Ծննդ. 22:1, Ելից 15:25, 16:4, 20:20, 2 Օր. 8:2, 16, 13:3, Դատ. 2:22, 3:1, 4):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾ ՓՈՐՁՈՒԽ Է/ՍՏՈՒԳՈՒԽ Է ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 106:16-18

¹⁶Երբ բանակում նախանձեցին Մովսեսին,
Ու նաև ՏԻՐՈՋ սրբին՝ Ահարոնին,
¹⁷Երկիրը բացվեց ու կուլ տվեց Դաթանին
Ու Արիբոնի խմբին ծածկեց:
¹⁸Կրակը բորբոքվեց նրանց խմբի մեջ,

Բոցն այրեց ամբարիշտներին:

106:16-18 Այս պարբերությունը արտացոլում է Թվոց 16-ը՝ անապատում դեգերելու շրջանը:

106:16 «ՏԻՐՈՋ սրբին» Սա նկատի ունի Ահարոնին որպես Քահանայապետ: Թվոց 16-ում հակառակություն եղավ նրա դեմ, որը Իսրայելի ճշմարիտ առաջնորդ էր (տես՝ Թվոց 16:1-7): Ահարոնի հատուկ սրբությունը կապված Քահանայապետ լինելու հարցում երևում է իր հանդերձանքի մեջ ինչպես նկարագրված է Ելից 28-ում, հատկապես 36-րդ համարում:

106:18 «կրակ» Թվոցում մի քանի տեղեր կան, որտեղ կրակը կիրառվում է որպես դատաստան:

1. Նաբադն ու Աբիուդը. սպանվեցին կրակով՝ «օտար կրակ» մատուցելու համար, տես՝ Թվոց 3:4, 26:61
2. ՅԱՀՎԵԻ կրակը տրտրջացող իսրայելացիների վրա, Թվոց 11:1-3
3. Կորիսի ըմբոստությունը, Թվոց 16:35, 26:10

Ելից 24:17 և 2 Օրինաց 4:24-ում Տիրոջ փառքը բնութագրվում է որպես լափող կրակ: Սա մատնանշում է իսրայելացիներին առաջնորդող և պաշտպանող փառքի *Շեխինա* ամպի, կրակի պուրը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿՐԱԿ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՇԵՆԻՆԱ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 106:19-27

¹⁹Քորեբում հորթ շինեցին
Ու երկրպագեցին ձուլածո արձանին:
²⁰Այսպես իրենց փառքը
խոտակեր հորթի նմանությունով փոխարինեցին:
²¹Մոռացան իրենց Փրկիչ Աստծուն,
Որ մեծամեծ գործեր կատարեց Եգիպտոսում,
²²Հրաշքներ՝ Քամի երկրում,
Ահավոր բաներ՝ Կարմիր ծովում:
²³Ուստի ասաց. «Ոչնչացնելու եմ նրանց»,
Եթե Նրա ընտրյալը՝ Մովսեսը,
Բաժանման տեղում Նրա առջև կանգնած չլիներ՝
Նրա բարկությունը իջեցնելու համար,
Որպեսզի չկործանի:
²⁴Նաև այն ցանկալի երկիրն անարգեցին,
Չհավատացին Նրա խոսքին,
²⁵Այլ իրենց վրաններում տրտնջացին,
ՏԻՐՈՋ ձայնը չսեցին:
²⁶Ուստի Իր ձեռքը նրանց դեմ բարձրացրեց,
Որ տապալի նրանց անապատի մեջ,
²⁷Տապալի նրանց սերունդը՝ հեթանոսների մեջ,
Ու երկրների մեջ նրանց ցրիվ տա:

106:19-27 Այս պարբերությունը արտացոլում է Ելից 32 և Թվոց 14 գլուխները:

106:19 «հորթ շինեցին» Հորթը շինվել էր որպես ՅԱՀՎԵԻ ֆիզիկական ներկայացուցիչը (տես՝ Ելից 32:8, ուշադրություն դարձրեք Հերոբոամի I-ի երկու ոսկե հորթերին՝ Դանում և Բեթելում): Այն շինվել էր եգիպտացիների կողմից իսրայելացիներին տրված ոսկուց: Սակայն այն հիշեցնում էր իսրայելացիներին եգիպտական պտղաբերության աստծո մասին (տես՝ Ելից 32:6,19):

Հորթը նաև կիրառվում էր որպես քանանացիների պողպերության պաշտամունքի սիմվոլ՝ *Էշի* և *Բահադի* համար (Ռաս Շամրայի տեքստերից):

❖ «**Քորեք**» Եբրայերեն այս արմատը (BDB 352, KB 349) նշանակում է «անջրդի» կամ «անապատ»: Այս տերմինը ամենահաճախը կիրառվում է 2 Օրինաց գրքում «Իսրայելի հետ ՅԱՀՎԵԻ սարում» հանդիպման համար: Ելիցում և Թվոցում այն կոչվում է «Մինա» (BDB 696), որը եբրայերեն բառ չի: Հնարավոր է այն կապված է «մեղքի անապատ» (BDB 95, տես՝ Ելից 16:1, 17:1, Թվոց 33:11,12) խոսքի հետ: Այս տերմինը հաճախ ասոցացվում է անապատային փոքրիկ թփի հետ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՔՈՐԵԲ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻՆԱ ԼԵՌԱՆ ՏԵՂԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

❖ «**երկրապզեցին**» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ

106:20

NASB, NKJV, NJB, LXX, JPSOA «նրանց փառքը»

NRSV, TEV «Աստծո փառքը»

REB «նրանց Աստվածը»

Peshitta «նրանց Փառավորը»

MT տալիս է «նրանց փառքը», սակայն NET Աստվածաշունչը նշում է, որ հնագույն Եբրայերեն դպրական ավանդույթը առաջարկում է բնագիր տեքստում «նրա փառքը» կամ «իմ փառքը»՝ նկատի ունենալով Իսրայելի ուխտի Աստծուն (տես՝ Երեմ. 2:11):

106:21-22 Ինչպիսի՛ ապշեցնող համարներ են: Աստծո սեփական ժողովուրդը երես է դարձնում միակ ճշմարիտ Աստծուց դեպի ինչ-որ կուռք (տես՝ Երեմ. 2:11-13, ինչպես և բոլոր մարդիկ՝ Հռոմ. 1:21-23):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿՈՒՊԱԾՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

106:21 «իրենց Փրկիչ Աստծուն» «Աստված» թարգմանված բառը *Էշ* անունն է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Ա

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԵՐ ՓՐԿԻՉԸ, Ի.

106:22 «Քամի երկրում» Քամը (BDB 325 I) Նոյի որդիներից մեկն էր: Նա մի քանի ազգերի հայրն էր (Ծննդոց 10):

1. Եգիպտոսի (Միսրայիմ), տես՝ Սաղմ. 78:51, 105:23,27
2. Քանանի

❖ «**Կարմիր ծով**» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿԱՐՄԻՐ ԾՈՎ

106:23 ՅԱՀՎԵՆ Մովսեսին արտահայտվեց ասելով, որ պատրաստվում է ոչնչացնել նրանց և նրանից սկսել ամեն ինչ, ինչպես որ արել էր Նոյի և հետագայում Աբրահամի հետ (տես՝ Ելից 32:10):

Մովսեսը բարեխոսեց ՅԱՀՎԵԻՆ Իսրայելի համար (տես՝ Ելից 32:11-13): Կարծում են սա ստուգաբար էր Մովսեսին զորացնելու համար: ՅԱՀՎԵՆ մտափոխվեց (տես՝ Ելից 32:14) և պատասխանեց Մովսեսի աղոթքին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԽՈՍԱԿԱՆ ԱՂՈՌՔ

❖ **«Նրա բարկությունը»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈՒՆ ՆԿԱՐԱԳՐՈՂ ԱՆՏՐՈՊՈՒՄՈՐՖԻԿ ԼԵՉՈՒ

106:24 Մի քանի անգամ Իսրայելը մերժեց հավատալ ՅԱՀՎԵԻՆ Քանանի երկիրը իրենց տալու Նրա խոստմանը (տես՝ Թվոց 14:1-3, 31, 20:3-4, 2 Օր. 9:23, Եզեկ . 20:5-8):

106:25 Իրենց վրաններում տրտնջալու այս երկու օրինակները (որոնց մասին ՅԱՀՎԵՆ չպետք է իմանար) գտնվում են Թվոց 14:2 և 2 Օրինաց 1:27-ում:

❖ **«ՏԻՐՈՉ ձայնը չլսեցին»** Սա գուգահեռված է հ.24-ում «չհավատացին Նրա խոսքին» արտահայտությանը:

«Լսել» ԲԱՅԸ մատնանշում է «լսել, կատարելու համար»:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՇԵՄԱ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԵԼ

106:26 «Նա երդվեց նրանց / Իր ձեռքը նրանց դեմ բարձրացրեց» ԲԱՅԸ (BDB 669, KB 724, *Qal* ԱՆԿԱՏԱՐ *վալ*-ով) բառացի նշանակում է «բարձրացնել» (այսինքն՝ ձեռքը բարձրացնելը որպես ժեստ երդմամբ երդվելու համար), ՅԱՀՎԵԻ խոստումը՝

1. Արբահամին նկատի ունենալով Քանանը – ԵԼից 6:8 (տես՝ Ծննդ. 15:12-21), Նեեմ. 9:15դ, Եզեկ . 20:5-6
2. ՅԱՀՎԵՆ Իր խոստումը մերժելիս – Թվոց 14:1-3, 23, 2 Օրինաց 1:35, Սաղմ . 95:11, Եբր . 4:3, 5

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԱՀԱՊԵՏՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՈՒԽՏԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

106:27 Երկու ԲԱՅԵՐԸ վերաբերում են գերությանը:

1. տապալել (բառացի՝ «ընկնելու պատճառ հանդիսանալ») – BDB 656, KB 709, *Hiphil* ԱՆՈՐՈՇ ԿԱՉՄՈՒԹՅՈՒՆ, տես՝ Սաղմ . 106:26ր
2. ցրիվ տալ – BDB 279, KB 280, *Piel* ԱՆՈՐՈՇ ԿԱՉՄՈՒԹՅՈՒՆ

Սա ուխտի անհնազանդության դեմ զգուշացում էր, տես՝ Ղևտ . 26:33, 2 Օրինաց 4:27, 28:64, 29:28, Սաղմ . 44:11, Եզեկ . 20:23: Ինչպես որ ՅԱՀՎԵՆ քանանացիներին դուրս քշեց երկրից իրենց մեղքերի պատճառով (տես՝ Ծննդ. 15:12-21), այժմ անաչառ դատաստանի միջոցով նույնն անում է Իսրայելի հանդեպ: Մեղքն ունի իր հետևանքները:

Եվս մեկ կարծիք գերության վերաբերյալ: Ինչքան որ այն ամոթալի և ցավալի էր, այն նպաստում էր ՅԱՀՎԵԻ մասին պատգամի տարածմանը: Խնդիրն այն էր, որ Իսրայելը շարունակում էր սխալ պատգամ հասցնել նրանց (տես՝ Եզեկ . 36:22-23):

Երեմ. 31:31-34-ի «Նոր ուխտը» կենտրոնանալու է ՅԱՀՎԵԻ կողմից Իրեն հայտնելու վրա՝ ապստամբ Իսրայելի հանդեպ Իր ցուցաբերած գթառատ գործերով (տես՝ Եզեկ . 36:24-36):

106:27ա,գ

NASB

«տապալել»

NKJV

«նետել»

NJB

«հարվածել»

TEV, REB, Peshitta

«ցրել»

NRSV, JPSOA, Targums

«սփռել»

LXX

«զցել»

MT տալիս է «ընկնելու առիթ լինել» ԲԱՅԸ (BDB 656, KB 709, *Hiphil* ԱՆՈՐՈՇ ԿԱՉՄՈՒԹՅՈՒՆ): Համենայնդեպս, երկու շտկում է եղել փորձելու այս ԲԱՅԸ կապել հ.27բ-ի «նրանց ցրելու» հետ (BDB 279, KB 280, *Piel* ԱՆՈՐՈՇ ԿԱՉՄՈՒԹՅՈՒՆ):

1. «ընկնելու առիթ եղավ» - לִּפְנֵיהֶם
2. «և սփռեց» - צִפְּרָהּ
3. «և տարածեց» - לִפְנֵיהֶם

UBS Տեքստային Նախագիծը, էջ՝ 383, #1 տարբերակին գնահատում է “B”:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 106:28-31

²⁸Նրանք Բել-փեզովրին հարեցին

Ու մեռածների զոհերը կերան:

²⁹Այսպես իրենց արարքներով Նրան բարկացրին,

Եվ նրանց վրա համաճարակ հասավ:

³⁰Ապա Փենեհեսը վեր կացավ

Ու դատաստան արեց, և համաճարակը դադարեց:

³¹Այս բանը նրան արդարություն համարվեց՝

Սերնդից սերունդ՝ հավիտյան:

106:28-31 Այս պարբերությունը կապ ունի Թվոց 25-ի հետ: Իսրայելը խառնվեց Մովաբի պտղաբերության պաշտամունքին: Կռապաշտությունը Իսրայելի պատմության մեջ մեծագույն խնդիրն է եղել: Ես այստեղ ներառել եմ 2 Օրինաց 18:10-11-ի գրառումները:

2 Օրինաց 18:10-11 Մի շարք ԴԵՐԲԱՅՆԵՐ կան, որոնք մատնանշում են քանանացիների կռապաշտությունը՝

1. **NASB, «ով իր աղջկան կամ տղային անց է կացնում կրակով»** - BDB 716, KB 778, *Hiphil* ԴԵՐԲԱՅ
2. **NASB, «մեկը, որ դյուրանքներ է անում»** - BDB 890, KB 1115, *Qal* ԴԵՐԲԱՅ (կիրառում է թե՛ ԲԱՅԸ և թե՛ ԳՈՅԱԿԱՆԸ)
NKJV, NET, «նա, որ կախարհություն է անում»
NRSV, NJB, NIV, «նա, որ հմայություններ է անում»
JPSOA, «գուշակություն»
3. **NASB, «նա, որ կախարհություն է անում»** - BDB 778 II, KB 857, *Poel* ԴԵՐԲԱՅ
NKJV, NRSV, NJB, JPSOA, «հմայող»
NIV, «կախարհություն»
NET, «գուշակություն կարդացող»
4. **NASB, NKJV, NIV, «նա որ գուշակություն է մեկնում»** - BDB 638 II, KB 690, *Piel* ԴԵՐԲԱՅ
NRSV, NJB, «գուշակություն»
JPSOA, «հմայող»
NET, «դյուրող»
5. **NASB, NKJV, NRSV, NJB, JPSOA, NET, «կախարհ»** - BDB 506, KB 503, *Piel* ԴԵՐԲԱՅ
NIV, «կախարհությամբ զբաղվող»
6. **NASB, «մեկը, որ հմայում է»** - BDB 287, KB 287, *Qal* ԴԵՐԲԱՅ (կիրառում է ԲԱՅԸ և ԳՈՅԱԿԱՆԸ)
NKJV, «նա, ով դյուրում է»
NRSV, JPSOA, NIV, NET, «նա, ով հմայում է»
NJB, «հմայախոս»
7. **NASB, NKJV, «հոգեհարցուկ»** (այսինքն՝ հոգի կանչող) – BDB 981, KB 1371, *Qal* ԴԵՐԲԱՅ
NRSV, JPSOA, «հոգիներից խորհուրդ հարցնողներ»
NJB, «հոգիներին խորհուրդ տվող»
NIV, «մեղիում»
NET, «նա, ով հոգիներ է հրապուրում»

8. **NASB, NKJV, NIV, «նա, ով հարցնում է»** (ենթադրյալ)(այսինքն՝ հոգեհարցուկ) – BDB 981, KB 1371, *Qal* ԴԵՐԲԱՅ (ենթադրյալ)
NRSV, «հոգիների հետ խորհրդակցում է»
NJB, «մեղիումներ»
JPSOA, «նմանատիպ հոգիներ»
NET, «օկուլտիզմով զբաղվողներ»
9. **NASB, NKJV, «մեռած մարդկանց կանչողներ»**
 ա. BDB 205, KB 233, *Qal* ԴԵՐԲԱՅ
 բ. BDB 559, KB 562, *Qal* ԴԵՐԲԱՅ
NRSV, «ով մեռելներից պատգամներ է փնտրում»
NJB, NET, «նեկրոմաններ»
JPSOA, «մեռելահարցուկ»
NIV, «մեռելից խորհուրդ հարցնող»

Ինչպես տեսնում եք անգլերենի տարբեր թարգմանություններից, այս բառերը ունեն իրար հետ հաստման տարածքներ: Այս տերմինները կարծես թե նկատի ունեն տարբեր տեսակի հեթանոսական պաշտամունքի ծեսեր, սակայն դրանց ստույգ սահմանումները անհայտ են արդի Աստվածաշնչյան ուսանողներին: Տես հակիրճ քննարկում՝ (1) *Մուրբգրային Նկարագրությունների Բառարան*, էջ՝ 524-528 և 608-610, և նաև (2) *Հին Կտակարանի հոմանիշները* Ռոբերտ Բ. Գրդլաթոունի կողմից, էջ՝ 296-302: Ընդհանուր պատկերն այն է, որ փորձեն ճանաչել և շահարկել ապագան անձնական շահերի համար: ՅԱՀՎԵԻ ժողովուրդը պետք է վստահի և ծառայի Նրան: «Առաջինը ես» հին բուն մեղքը հանդիսանում է ամբողջ մարդկության խնդիրների արմատը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՄԱՅՈՒԹՅՈՒՆ

18:10 «ով իր աղջկան կամ տղային կրակով է անցկացնում» Սա *Մողոքին*՝ պտղաբերության աստծուն նվիրված պաշտամունք է: Իսրայելում առաջնեկը (տես՝ Ելից 13) պետք է նվիրվեր ՅԱՀՎԵԻՆ՝ Նրան ծառայության: Քանանում առաջնեկին կրակով զոհաբերում էին *Մողոքին*, որպեսզի պտղաբերությունը ապահովված լիներ, (տես՝ 2 Օրինաց 12:31, Դևտ. 18:21): Անգամ մի դեպք է արձանագրված 4 Թագ. 21:6-ում, որտեղ Աստծո ժողովուրդը երկրպագում էր պտղաբերության այս կուռքին: Նաև հնարավոր է, որ սա ինչ-որ ձևով կապված է ապագան իմանալու հետ (տես՝ 4 Թագ. 3:26-27): Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄՈՂՈՔ

❖ **«դյուրություն»** Սա երբայերեն «աստվածային» (BDB 890, տես՝ Թվոց 22:7, 23:23, Եզեկ. 21:21, 4 Թագ. 17:17) արմատից է: Այն մի քանի տարբեր մեթոդներ նկարագրող ընդհանուր տերմին է, բայց ամբողջ նպատակը աստծո կամքը որոշելն է մեխանիկական կամ բնական միջոցներով, ինչպես օրինակ ոչխարների լարերը ստուգելով կամ նիզակներ նետելով: Սա հիմնված է հեթանոսական աշխարհայացքի վրա, որ բնության մեջ կատարվող իրադարձությունների մեջ թաքնված են ապագայի մասին տեղեկություններ և այդ շնորհալի մարդիկ (այսինքն՝ սուտ մարգարեները, օր.՝ Երեմ. 27:9, 29:8, Եզեկ. 13:9, 22:28) գիտեն դա և ազդում են այդ ապագայի վրա:

❖ **«նա, որ կախարդություն է անում»** Այս տերմինը (BDB 778 II, KB 857) առնչվում է «ամպ» տերմինի (BDB 777) հետ: Լեզվաբանները կարծում են, որ այս տերմինը կապ ունի հետևյալ ձայների հետ՝

1. միջատների բզզոցի
2. ծառերի սուսափյունի
3. անհայտ ստուգաբանություն է (եթե ամպ, ապա կապ ունի տեսարանի հետ)

Մովսեսի գրերի մեջ զուգահեռ հատվածը, որը արգելում է այս նույն հեթանոսական գործառույթները, գտնվում է Դևտ. 19:26-20:8-ում (տես հատկապես՝ 19:26): Այս նույն տերմինը նաև կարելի է գտնել Դատ. 9:37, 4 Թագ. 21:6, 2 Մնաց. 33:6, Եսայի 2:6, 57:3, Երեմ. 27:9, Միքիա 5:12:

❖ **«մեկը, որ գուշակություններ է մեկնում»** Այս տերմինի (BDB 638 II, KB 690) իմաստը անհայտ է: Միրիայում սա նշանակում է «մոթոնոթալ անհասկանալի հմայությունները» (KB 690): Արմատը մի քանի կիրառություն ունի՝

1. օձ – BDB 638 I
2. ԲԱՅԸ միայն *Piel*-ով, (BDB 638 II) նշանակում է՝
ա. հմայությամբ զբաղվել
բ. նշաններ, կանխագուշակություններ դիտարկել
3. պղինձ՝ բրոնզ, BDB 638 II
4. անհայտ – BDB 638 IV

❖ **«վհուկ»** Այս տերմինը (BDB 506, KB 503) հիմնականում նշանակում է «կտրել»՝

1. ինչպես կախարդական ըմպելիքի բաղադրիչները մանրացնելու դեպքում
2. իր անձը կտրատելը որպես աստծո ուշադրությունը գրավելու միջոց (այսինքն՝ սիրիական կիրառություն, տես՝ 3 Թագ. 18:28):
3. այս տերմինը կիրառվում էր նկարագրելու՝
ա. Ելից 7:11-ում Փարավոնի իմաստուններին
բ. Դան .2:2-ում Նաբուգոդոնոսորի իմաստուններին

18:11 «թուղթ ու գիր անող» Սա բառացի «հանգույցներ կապելն», «իրար միահյուսելը» կամ «իրար միացնելն» է (BDB 287, KB 287): Սաղմ.58:5 և Ժող.10:11 նկատի ունի օձի հմայելուն: Իր արտասանության մեջ չնչին տարբերությամբ այն նկարագրում է Ես.47:8-11-ում բաբելոնյան սուտ իմաստունին:

❖ **«նշանագետ»** ԴԵՐԲԱՅՆԵՐԻ (BDB 981, KB 1371) հիմնական իմաստը «հարցնել» կամ «տեղեկանալ» է: Այստեղ տեղեկանալ հոգիների աշխարհից (օր.՝ ՅԱՀՎԵԻՑ, Հեսու 9:14 կամ կուռքերից, Ովսեա 4:12):

Առաջին ԳՈՅԱԿԱՆԸ՝ «նշանագետ» (BDB 15) սահմանելու համար տարբերվող տերմին է: Ոմանք այս տերմինը դիտարկում են որպես Դևտ. 19:31, 20:6,27-ում կիրառվող տերմին, որպես՝ (1) մի գուր կամ գերեզման, որտեղ հոգիներ են հրապուրված, (2) «հայր» բառի մի տեսակ է, որը վերաբերում է նախնիների երկրպագությանը: LXX-ի Եսայի 8:19-ում սա թարգմանված է որպես «փորոքաբան»: Սրա և Եսայի 29:4-ի պատճառով ոմանք կարծում են, որ սա նշանակում է «մրմնջալ» կամ «փնթփնթալ»: Սա կարող է ենթադրել «տարբեր ձայներով խոսելը»: Այդուհանդերձ, 1 Թագ. 28:7-9-ից տեսնում ենք, որ սա կապված է այն կարողության հետ, որ կանչում կամ խոսում են ինչ-որ մեկի հետ, որ հողի մեջ է կամ հաղորդակցվում են մեռելների հետ կամ հանդերձյալ կյանքի հոգիների հետ, այսինքն՝ մեռելահարցություն /նեկրոմանտիկություն/:

Երկրորդ ԳՈՅԱԿԱՆԸ՝ «ոգեհարցուկները» (BDB 396) երբայերեն «իմանալ» (BDB 395) բառի ձև է: Սա նկատի ունի այն մարդկանց, ովքեր հոգևոր տիրույթի մասին գիտություն ունեն կամ կապ ունեն հոգևոր տիրույթում գտնվողների հետ, ովքեր ունեն այդ գիտությունը (տես՝ Եսայի 8:19, 19:3):

❖ **«մեռելահարցուկ»** Այս արտահայտությունը երկու *Qal* ԴԵՐԲԱՅՆԵՐԻ (BDB 205, KB 233, «հարցնել» և BDB 559, KB 562, «մեռելներին») համադրությունն է: Համատեքստում այն նկատի ունի մեղիումներին և «հոգեհարցուկներին»: Այս էլիտ, ենթադրյալ շնորհալի մարդիկ կապ էին հաստատում մեռելների հետ ապագայի մասին տեղեկության և դրա վրա ազդելու գործության համար:

Բոլոր հնագույն մշակույթները հավատում էին հանդերձյալ կյանքին: ՀՄԱ-ում շատերի համար սա ուներ երկու հավանականություն՝

1. նախնիների երկրպագություն, որտեղ ընտանիքի հոգիները կարող էին ազդել ներկայի և ապագայի վրա

2. ֆիզիկական (աստղեր, բնության գորություններ) կամ հոգևոր (դևեր, կիսասատվածներ) գորությունները կարող էին գործադրվել իմանալու և ազդելու անձնական ճակատագրերի վրա:

Սաղմ. 106:28 Սա նկատի ունի Իսրայելի կռապաշտությունը *Բեյի* և *Բեյփեզուրի* հետ (տես՝ Թվոց 25:1-3, 31:16):



NASB, NKJV, NRSV, Peshitta, JPSOA «մեռածների»
NJB, REB «անկենդան աստվածների»
TEV «մեռած աստվածների»
LXX «մեռելիների»

MT տալիս է «մեռածներ» (BDB 559, KB 562, *Qal* ԴԵՐԲԱՅ): Այն կարող է նկատի ունենալ՝

1. նախնյաձ պաշտամունքը (տես՝ 2 Օր. 26:14)
2. մեռած նախնիներից խորհուրդ հարցնելը (տես՝ 1 Թագավորաց 28)
3. գոյություն չունեցող քանանացիների պողաբերության աստվածների նկարագրություն (տես՝ Թվոց 25:2, BDB 559, *Qal* #1, դ)

Համատեքստի հետ լավագույնս համապատասխանում է տարբերակ 3-ը:

106:29 «նրանց գործերը» Հետաքրքիր է, թե այստեղ արդյո՞ք կար դիտավորյալ համեմատություն՝

1. Իսրայելացի կռապաշտների գործերի, Սաղմ. 106:29,39
2. և ՅԱՀՎԵԻ գործերի միջև, Սաղմ. 106:2,7,13, 21-22

Ինչպիսի՞ հակադրություն:

106:31 «Այս բանը նրան արդարություն համարվեց» Սա հենց նույն արտահայտությունն է, որն օգտագործվեց Ծննդ. 15:6-ում Աբրահամի արդարացման համար՝ շնորհքով, հավատքի միջոցով, որը Պողոսը մեջբերեց Հռոմ. 4:3, Գաղ. 3:6-ում: ԲԱՅԻ մեջ միակ տարբերությունն այստեղ (BDB 362, KB 359, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ) և այնտեղ (*Qal* ԱՆԿԱՏԱՐ) բայական ձևն է: Տես ամբողջական գրառումը Ծննդ. 15:6-ում՝ առցանց տարբերակով www.freebiblecommentary.org

Փենեհես քահանայի գործողությունները նկարագրված են Թվոց 25:11-13-ում: Նրա կտրուկ գործողությունները՝ ինչպես Աբրահամինը, ցույց տվեցին ՅԱՀՎԵԻ վրա իր ունեցած հավատքը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

❖ «սերնդից սերունդ հավիտյան» Փենեհեսի գործողությունները օրինակ եղան ճշմարիտ հավատարիմ հետևորդի: Այս վկայությունը պահպանվել է և շարունակում է խոսել նրա հավատքի՝ հավատարմության մասին:

Այն, թե ինչպես ենք ապրում, ազդում է մարդկանց կյանքերի վրա անգամ մեր մահից շատ երկար տարիներ անց:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼԸ, ՎՍՏԱՀԵԼԸ, ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ՈՒՄ

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 106:32-33

³²Նաև Նրան բարկացրին Մերիբայի ջրերի մոտ .

Նրանց պատճառով Մովսեսի համար շատ վատ եղավ,

³³Քանի որ դառնացրին նրա հոգին,

Նա էլ չմտածված խոսեց իր շրթունքով:

106:32-33 Այս պարբերությունն արտացոլում է Թվոց 20-ի դեպքերը: Իսրայելացիներն իրենց խոսքերով բարկացրեցին Մովսեսին Մերիբայի մոտ և նա սուր արձագանքեց (տես՝ Թվոց 20:12, 27:14, 2 Օրինաց 1:37, 3:26-27, 34:4): Աստված մարդահաճո չէ, յուրաքանչյուր անհնազանդություն ունի հետևանքներ (տես՝ Գաղ. 6:7, տես ամբողջական գրառումը առցանց տարբերակով):

106:33 «Նրա հոգին» NASB «Հոգին» (BDB 924) տալիս է մեծատառերով, որը ենթադրում է ՅԱՀՎԵԻ Հոգին, սակայն համատեքստից պարզ է, որ նկատի առնված Մովսեսի հոգին (այսինքն՝ կյանքի ուժը): Սաղմ. 106:33բ-ի գուգահեռ տողում «նա» դերանունը վերաբերում է Մովսեսին:

Սա կարող է վիճելի հարց լինել, քանի որ Աստծո Հոգին էր, որ Մովսեսի (տես՝ Թվոց 11:17, Նեեմ .9:20), Իսրայելի (տես՝ Թվոց 24:3) և երկուսի (տես՝ Եսայի 63:10-14) հետ էր:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈԳԻՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒԲՄ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 106:34-39

³⁴Զկործանեցին այն ազգերին,

Որոնց մասին ՏԵՐԸ պատվիրել էր իրենց .

³⁵Այլ խառնվեցին հեթանոսների հետ

Ու նրանց գործերը սովորեցին:

³⁶Եվ նրանց կուռքերին ծառայեցին

Ու նրանք իրենց համար որոգայթ դարձան:

³⁷Այո՛, իրենց տղաներին ու աղջիկներին գոհաբերեցին դևերին,

³⁸Անմեղ արյուն թափեցին՝ իրենց տղաների ու աղջիկների արյունը,

Որոնց գոհեցին Քանանի կուռքերին .

Երկիրը պղծվեց արյունով:

³⁹Այսպես պղծվեցին իրենց գործերով

Ու իրենց արարքներով պոռնկացան:

106:34-39 Այս պարբերությունն արտացոլում է Աստծո խոսքերը ուղղված Իսրայելին՝ քանանացիների հետ նրանց համագործակցության շուրջ (տես՝ Ելից 34:10-17, 2 Օր. 7:1-6, 16, 20:16-18): Հետուի գիրքը նկարագրում է Քանանի ամենամեծ պարսպապատ քաղաքների գրավումը, սակայն յուրաքանչյուր ցեղ պետք է ավարտին հասցնե՞ր առաջադրանքը՝ քանանացիներին իրենց սեփական ցեղային տեղանքներից դուրս քշելով: Նրանք դա չարեցին (այսինքն՝ Դատ. 1:21,27, և այլն): Հետևանքները հստակ ձևակերպված են Թվոց 33:50-56-ում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿՈՎՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

106:35 «ազգերը» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՂԵՍՏԻՆԻ ՆԱԽԱԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

106:36 «որանք որոգայթ դարձան» Այս «որոգայթ» (BDB 430) բառը վերաբերում է կենդանիների համար օգտագործվող «ծուղակին» (բառացի՝ «թակարդ»): Այն կիրառվում էր որպես նկարագրություն քանանացիների պտղաբերության պաշտամունքի համար գայթակղության (տես՝ Ելից 23:33, 2 Օր. 7:16, Դատ. 2:3):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՄԱՈՒՄ ՊՏՂԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԸ

106:37-38 Սա վերաբերում է պտղաբերության աստված *Մոդոքին*:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄՈՂՈՔ

106:37 «ղևեր» Սա (BDB 993) վերաբերում է հեթանոս աստվածներին (տես՝ 2 Օր. 32:17): ՀԿ-ում այս բառը միայն երկու անգամ է կիրառվում: Սա հավանաբար փոխառնված բառ է արամերենից: Հեթանոս կուռքերի գաղափարը որպես ղևեր կարելի է տեսնել ՆԿ-ում՝ 1 Կորնթ. 10:19-20 և Հայտն . 9:20-ում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՐԵՇՏԱԿՆԵՐ և ԴԵՎԵՐ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԻՎԱԿԱՆԸ ՀԿ-ՈՒՄ

106:38 «երկիրը պղծվեց» Քանանի երկիրը պղծվել էր քանանացիների միջոցով (տես՝ Ծննդ. 15:16), իսկ այժմ՝ իսրայելացիների (տես՝ Թվոց 35:33-34, Երեմ. 3:2-10): Քանանը պատկանում էր ՅԱՀՎԵԻՆ: Դա Նրա հողն էր:

❖ **«արյունով»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐՅՈՒՆ

106:39 «իրենց արարքներով պոռնկացան» Սա (BDB 275, KB 275, *Qal* ԱՆԿԱՏԱՐ *վայլ*-ով) երբայերեն դարձվածք է կռապաշտության պաշտամունքի համար (տես՝ Դատ. 2:17, Եզեկիել 23, Ովսեա 5:3): Այն հիմնված է ՅԱՀՎԵԻ նկարագրության վրա, որպես Հայր և Իսրայելը որպես կին (տես՝ Ովսեա 1-3): Մեկ այլ աստծո հետևից գնալը դիտարկվում էր որպես «հոգևոր շնություն» (տես՝ Ելից 34:15, Թվոց 15:39, Սաղմ. 73:27, Ովսեա 4:12, 9:1): Երբեմն նկարագրությունը թե՛ փոխաբերական է և թե՛ բառացի, քանի որ պտղաբերության պաշտամունքի մեծ մասը տեղի էր ունենում նմանակման կախարհությամբ (այսինքն՝ սեռական գործողություններ պաշտամունքի անունով և պաշտամունքի միջավայրում):

<p>NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 106:40-43</p> <p>⁴⁰Ուստի ՏԻՐՈՉ բարկությունը բորբոքվեց Իր ժողովրդի վրա, Այնքան, որ զգվեց Իր ժառանգությունից:</p> <p>⁴¹Հեթանոսների ձեռքը մատնեց նրանց Ու իրենց ատոդները տիրեցին նրանց վրա:</p> <p>⁴²Իրենց թշնամիները նեղեցին նրանց, Ու նրանք ենթարկվեցին նրանց ձեռքի տակ:</p> <p>⁴³Շատ անգամ ազատագրեց նրանց, Բայց նրանք իրենց խորհուրդներով դառնացրին Նրան Ու ստորացման ենթարկվեցին իրենց անօրենությունների պատճառով:</p>

106:40-43 Սա ելիցի, անապատում դեգերելու, նվաճման, դատավորների և միապետության շրջանների ամփոփում է: ՀԿ-ը արձանագրություն է Իսրայելի հնազանդվելու անկարողության մասին (տես՝ Նեեմիա 9, Գաղատացիների 3):

Ուշադրություն դարձրե՛ք հզոր զգայական խոսքերը, որոնք կիրառված են նկարագրելու, թե ինչպես է ՅԱՀՎԵՆ արձագանքում Իսրայելի կռապաշտությանը, ապստամբությանը և անհավատությանը:

1. Տիրոջ բարկությունը բորբոքվեց Իր ժողովրդի վրա (տես՝ 2 Օր. 1:34-35, 9:19)
2. Նա զգվեց Իր ժառանգությունից (տես՝ Դևտ. 26:30, 2 Օր. 32:19)
3. Նա նրանց մատնեց . . . ձեռքը (այսինքն՝ երես թեքելու՝ մերժման երբայերեն դարձվածք), շարունակվում է տարբեր, բայց զուգահեռ արտահայտություններում՝ Սաղմ. 106:41-42:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈՒՆ ՆԿԱՐԱԳՐՈՂ ԱՆՏՐՈՊՈՄՈՐՖԻԿ ԼԵՉՈՒ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՉԵՌՔ

106:42 «նրանք երնթարկվեցին» AB (Էջ՝ 75) նշում է, որ «Քանանի» (BDB 488) բաղաձայնները նույնն են ինչ այս ԲԱՅԻՆԸ (BDB 488, KB 484, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ *վալ*-ով): Հնարավոր է, որ սա եղել է դիտավորյալ հնչերանգային խաղ: Քանանի ցեղերը իրենց ենթարկեցին ՅԱՀՎԵԻ անհավատ ցեղերին:

106:43

NASB

NKJV, LXX, JPSOA

NRSV, REB

NJB

TEV

Peshitta

«ու այսպես խորասուզվեցին իրենց անօրենության մեջ»

«ու իրենց անօրենության համար ստորացան»

«ու իրենց անօրենության միջոցով ստորացան»

«և ավելի խորասուզվեցին իրենց հանցանքի մեջ»

«և ավելի խորացան իրենց մեղքի մեջ»

«և նվաստացան իրենց անօրենության համար»

MT արտացոլվում է NRSV, REB թարգմանություններում: ԲԱՅԸ (BDB 568, KB 580, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) կարող է նշանակել՝

1. նվաստանալ (*Qal* արմատը)
2. խորտակված քայքայվել (*Niphal* արմատը)
3. ստորանալ (*Hophal* արմատը)

Որոշ եբրայեցի գիտնականներ առաջարկում են նմանօրինակ արմատ (קח, BDB 597), որը նշանակում է «քայքայում» կամ «փտտություն», ինչ վերը #2 տարբերակում (տես՝ Ժող. 10:18): Սակայն, UBS Տեքստային Նախագիծը, էջ՝ 383, տալիս է MT-ին “A” գնահատական:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 106:44-46

⁴⁴Համենայն դեպս, Նա նայեց նրանց նեղությանը,

Երբ նրանց աղաղակը լսեց,

⁴⁵Ու նրանց համար Իր ուխտը հիշեց,

Իր առատ ողորմությամբ զղջաց,

⁴⁶Ու նրանց գթության արժանացրեց

Բոլոր նրանց առջև, որ գերեվարել էին իրենց:

106:44-46 Այս պարբերությունը ցույց է տալիս ՅԱՀՎԵԻ գթառատ պատասխանը:

1. Նա նայեց նրանց նեղությանը (տես՝ Ելից 2:23, 5:7, Նեեմ. 9:9)
2. նրանց աղաղակը լսեց (տես՝ Ելից 2:23-25, 3:7-9, Թվոց 20:16, Դատ. 3:9, 6:7, 10:10, Նեեմ. 9:27):
3. Իր ուխտը հիշեց (տես՝ Ելից 2:24, Դևտ. 26:40,42,45, Սաղմ. 105:8, 42, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ)
4. Իր առատ ողորմությամբ զղջաց (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ)
5. Նա նրանց գթության արժանացրեց (տես՝ 3 Թագ. 8:50, 2 Մնաց. 30:9, Եզրաս 9:9, Նեեմ. 1:11, Երեմ. 42:12)
6. ուշադրություն դարձրեք Սաղմ. 106:43ա, ՅԱՀՎԵԻ մեկ այլ գթառատ ցանկություն

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈՒ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ (ՀԿ)

106:45 «ուխտ» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 106:47-48

⁴⁷Փրկի՛ր մեզ, ո՛վ ՏԵՐ, մեր Աստված

Ու հավաքի՛ր մեզ հեթանոսների միջից,

Որպեսզի Քո սուրբ անվանը գոհություն մատուցենք

Ու Քո օրհնությամբ պարծենանք:

⁴⁸Օրհնյալ լինի ՏԵՐԸ՝ Իսրայելի Աստվածը,

Հավիտյանս հավիտենից:

**Ամբողջ ժողովուրդը թող ասի. «Ամեն»:
Փառաբանեցե՛ք ՏԻՐՈՉԸ:**

106:47-48 Այս խոսքերը կարելի է նաև գտնել 1 Մնաց.16:35-36-ում: Այս Սաղմոսը սկսում է ՅԱՀՎԵԻՆ փառաբանելով՝ հավատարիմ հետևորդների հանդեպ Իր շնորհքի համար: Սակայն Իսրայելը հավատարիմ չէր եղել: Այժմ սաղմոսերգուն աղոթում է ՅԱՀՎԵԻՆ, որ Նա գործի իրենց համար և վերականգնի Իսրայելին գերությունից:

1. փրկիր մեզ – BDB 446, KB 448, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ 1 Մնաց. 16:35, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿՈՒԹՅՈՒՆ (ՀԿ)
2. հավաքիր մեզ հեթանոսների միջից – BDB 867, KB 1062, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ 2 Օր. 30:3, Սաղմ. 147:2, Եսայի 11:12, 56:8, Եզեկ. 39:28:

Վերականգնելու նպատակն էր, որ Իսրայելը կարողանա՝

1. Քո սուրբ անվանը գոհություն մատուցել – BDB 392, KB 389, *Hiphil* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՍՈՒԹՅՈՒՆ
2. պարծենա Քո օրհնությամբ – BDB 986, KB 1387, *Hithpael* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՍՈՒԹՅՈՒՆ

106:48 «Օրհնյալ լինի ՏԵՐԸ» Այս ԲԱՅԸ (BDB 138, KB 159, *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ /անզվերենում/) նաև հանդիպում է Սաղմ. 41:13, 72:18, 89:52-ում: Իսրայելը պետք է օրհնի իրենց Աստծուն՝ Իր էության և իրենց ցուցաբերած գթությունների համար: Սա ենթադրում է տաճարի երկրպագություն:

Ուշադրություն դարձրեք Աստծո ուխտի տիտղոսները՝

1. Ո՛վ ՏԵՐ, մեր Աստված, Սաղմ. 106:47 (ՅԱՀՎԵ *Ejnhil*)
2. ՏԵՐԸ, Իսրայելի Աստվածը, Սաղմ. 106:48 (ՅԱՀՎԵ *Ejnuh*)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Գ, Դ.

❖ «**հավիտյանս հավիտենից**» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ ('olam)

❖ «**Ամբողջ ժողովուրդը թող ասի «Ամեն»**» NASB –ը այս արտահայտությունը թարգմանում է որպես ՀԱՅՑԱԿԱՆ, սակայն այն *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ է: «Ամեն» նշանակում է ձևակերպված ճշմարտության հաստատում:

❖ «**Ամեն**» Իսրայելը (այսինքն՝ «ժողովուրդը») պետք է հաստատեր ՅԱՀՎԵԻ օրհնյալ լինելը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՄԵՆ

❖ «**Փառաբանեցե՛ք ՏԻՐՈՉԸ**» Այս Սաղմոսը ավարտվում է նույն կերպ, ինչպես Սաղմոս 105 և 104-ը: Սա ծիսական արտահայտություն է, որը բացում է (տես՝ Սաղմ. 105:1) և փակում է (տես՝ Սաղմ. 105:45) շատ Սաղմոսներ: Այն ցույց է տալիս, որ սաղմոսները ընթերցվում էին երկրպագության միջավայրում:

«ՏԵՐԸ» *Suh* (BDB 219) բառի համառոտ ձևն է:

Չարմանալիորեն սա բացակայում է LXX-ում, սակայն ներառված է Փեշիտտայում: Անշուշտ հավանական է, որ Սաղմ. 106:48-ը ծառայում է որպես դավանաբանական փակման խոսք Սաղմոսների չորրորդ Գրքի համար (այսինքն՝ Սաղմ. 41:13, 89:52):